առ մեզ· զի ճանաչացեալ է մեր յանկարդութենէ Ղպիոց
եպիսկոպոսաց, արտաքսեցաք զայն 'ի մերմէ Տէրութենէ։
Եւ արդ ըստ օրինաց մերոց կարօտ եմք յոյժ եպիսկոպոսի
միոյ յազգէ Հայոց, զի մեծ հարկաւորութիւն ունի մեզ։
Իբրեւ եկ փոխարքայն յԵգիպտոս յԱղէքսանդրիայ՝ հրաման
արար գլխաւորաց Հայոց գտանել զոմն և առաքել անդ·
և 'ի ծանուցանել նոցա զայս Կիրակոս եպիսկոպոսի առաջ-
նորդի տեղւոյն, նա յանձն առ յօժարութեամբ գնալ անդ·
այլ նոքա ոչ կամեցան թողուլ զնա, որպէս և փոխարքայն
չէր տուեալ հրաման մեկնելոյ նորա անտի։ Ապա խորհե-
ցան առաքել զՊօղոս վարդապետ Կեսարացի, որ նստէր
անդ իբրեւ ամիս 4, 'ի Սիս ձեռնադրիլ եպիսկոպոս եւ
գնալ յԵթովպիա։ Եւ 'ի նոյն աւուրս հասեալ էր յԵգիպ-
տոս Եղիա եպիսկոպոս իւրովքն հանդերձ· և 'ի ծանուց-
նել նմա զկնդիրն, 'ի սկզբան յանձն առ յօժարութեամբ
գնալ ծախիւք իւրովք· բայց ապա լուեալ յոմանց զդժուա-
րութիւն ճանապարհաց և զաղքատութիւն երկրին՝ յետս
եկաց։ Եւ Փոխարքայն վերստին հարկեցուցիչ բանիւ հրա-
ման արար անպատճառ գտանել զոք և առաքել· և եթէ
չգուցէ յԵգիպտոս, տալ բերել յԵրուսաղէմ· և ժողովեալ
իշխանք քաղաքին առ առաջնորդն, գրե՛ցին յԵրուսաղէմ
առ Խորհրդականս, զՀնդկաց Նուիրակ Ն[illegible]ոահամ վարդա-
պետն և [illegible]մ զայլ ոք՝ առաքել 'ի Սիս ձ[illegible]նադրիլ եպիս-
կոպոս և գնալ յԵգիպտոս։ Քանզի եօթն ամս հետէ ազգն
Հայոց մնացեալ էին առանց եպիսկոպոսի, և զայն ըս-
պասէին յազգէն Հայոց օծանել զԹագաւոր նոցա և ձեռ-
նադրել զնուիրեալն· գրեցին վասն այսր առ Պատրիար-
քունս 'ի Կոստանդինուպոլիս, որպէս և Կիրակոս եպիսկո-
պոս առ Զաքարիա վարդապետ, զի ակն ունէր շահիլ վի-
ճակ ինչ յեզր աշխարհի· վասն որոյ է ասէր՝ եպիսկո-
պոսին մնալ անդ ամս երիս, և յետ այնորիկ առաքել զայլ
ոք, ցուցանէ նաեւ զդիւրութիւն ճանապարհին· զաւուրս
երիս 'ի Սրվէյիչ, անտի նաւով 'ի Ճիտտէ և ապա 'ի Սաւա-
քին հանդէպ Ճիտտէի· և յետ 15 աւուրց ցամաքային ճա-
նապարհաւ 'ի Կէօնտէր թագաւորական մայրաքաղաք Հա-
պէշաց։

Եղիա Եպիսկոպոս մնացեալ յԵգիպտոս զաւուրս իբրեւ